556

1. Մեկը կար, որ հոժար էր
Իմ տեղը մեռնելու,
Հոժար էր Իր ուսի վրա
Բիրտ խաչը առնելու.
Որ ապրի իմ հոգին անարժան,
Որ գտնեմ ներում Իր սուրբ արյամբ:

Խաչի վրա գամված է Նա, (2)
Ծ, ի՜նչ մեծ, հիանալի փրկություն:
Խաչի վրա գամված է Նա:

2. Նա հեզ էր, համբերում էր
Սիրով Իր երկնային:
Դառը բաժակը խմեց,
Հոր կամքը կատարեց.
Որ ապրի իմ հոգին անարժան,
Որ գտնեմ ներում Իր սուրբ արյամբ:

3. Նա մեռավ հենց ինձ համար՝
Հեղելով սուրբ արյուն,
Որ նայեմ ես Իր խաչին,
Ստանամ փրկություն.
Որ ապրի իմ հոգին անարժան,
Որ գտնեմ ներում Իր սուրբ արյամբ:

Իր խաչով հաղթեց մահին, (2)
Ծ, ի՜նչ մեծ, հիանալի փրկություն՝
Իր խաչով հաղթեց մահին:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025